ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«13» Սեպտեմբերի 2021 թվականի թիվ 26-Ա

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ CK-5 ՀԱՑԱՀԱՏԻԿԱՀԱՎԱՔ ԿՈՄԲԱՅՆԸ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՏՈԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը ավագանուն տեղեկացրեց, որ Գեղարքունիք համայնքին 2008 թ. Rescad ծրագրով նվիրաբերվել է CK-5 հացահատիկահավաք կոմբայն, որը շուրջ 5 տարի իր վագքով գնացել է ԼՂՀ հացահատիկի հունձ կատարելու համար:Կոմբայնը շահագործվել է, մաշվածությունը շատ մեծ է և ունի վերանորոգման խնդիր, որը համայնքի բյուջեի հաշվին հնարավոր չէ վերանորոգել:
Գեղարքունիք համայնքը ունի «Գեղարքունիք համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվ, որն ունի իր մեխանիզացիայի պարկը:
Առաջարկում եմ CK-5 հացահատիկահավաք կոմբայնը և կոմբայնի կայանատեղին, որը կառուցվել է համայնքի կողմից որպես համաֆինանսավորում՝ տրամադրել «Գեղարքունիք համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին անհատույց շահագործման իրավունքով, որը հետագայում նույնպես կծառայի համայնքին:
Գեղարքունիք համայնքի համայնքային սեփականությունը հանդիսացող CK-5 հացահատիկահավաք կոմբայնը և նրա կայանատեղին ավելի արդյունավետ օգտագործման նպատակով՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը.

1. Գեղարքունիք համայնքի համայնքայինսեփականություն հանդիսացող երկու հիմնական միջոցները՝ CK-5 հացահատիկահավաք կոմբայնը և իր կայանատեղին հանձնել Գեղարքունիք համայնքի «Գեղարքունիք համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին՝ անհատույց շահագործման իրավունքով:
2. Ուղերձով դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի ղեկավար պարոն Դավիթ Մեջլումյանին՝ կոմբայնը և իր կայանատեղին ներառել կարմակ-2 բաղադրիչում:

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

Ավագանու անդամներ՝ Ստեփանյան Վանիկ Ն.

Կարապետյան Զավեն Ա.

Հակոբյան Արմեն Կ.

Միրիբյան Մարտին Ռ.

Գեղարքունիքի համայնքի ղեկավար Ա. Աբրահամյան

Կ.Տ.